


ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ

ԱՆՑՆՈՂ ՕՐԵՐԸ



Ինձ կը թշրի տակաւին,
Օրորոցիս վրայ հակ
երկու աչքեր արցունքոտ,
Որ զիս գիտեն հեռուէն:
Կ'երկարի թելն օրերուն,
Առէջ առէջ, հիւսք առ հիւսք
Անհուն կամուրջ մահերու:

Պատանութեան արեւին,
Ճառագայթներն առաջին
Հին ծիւնապատ լեռներէն.
Թեսոյ մըշուշ ու արիւն,
Ամէն աչքի մէջ արցունք,
Ճամբայ, ճամբայ, ճամբաներ
Կարաւաններ, մուշ ու սուզ:
Շուրթեր կըզպուած անալօթք,
Ու նայուածքները տարտամ
Վըրան անհուն մահերու:

Օտարութեան զուրերուն,
Պատանութիւնն իմ վըտիտ
Աւազներուն անկայխան
Կըտոր կըտոր ու տըրտում:
Բայց աչքերուս դէմն է միշտ
Դէմքեր անուշ կըզկըտուք
Լինին վրայ արիւնի:

Անցնող օրեր իմ կեանքիս,
Նորէն դարձէք դուք ինծի,
Ու բերէք ինձ անցեալիս
Արեւն անձրեւն ըլծալի,
Հրայրքն հողին հայրենի,
Խանդն ու կարօտն երբմննի
Որոնք օք մը իմս եղան:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎՐԴ.



ՀԻՆ ՀԱՀԵՑ

Հետեւեազ անակուն տաղը ընդորինակած
ենք Ս. Մարուսյա Ձեռագրաւան թ. 2009
դրչագրեն: Բաւական լաւ բոլորդիրով գրուած
Դաւելգիր-Տաղարան մըն է առ, որուն զիշը,
տեղի ու բուականը յայտնի չեն:

ԽՐԱՏԱԿԱՆ ԲԱՆ ՍԻՐՈՅ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Խրատ մը տամ սիրով քեզ
Թէ միտդ առնուս ու պահես
Սիրել զընկեր տամ ես քեզ
Որ զքեզ առնէ պարզերես:

Իմայ զի դու աման ես
Շնորհաց ասաբննական ես
Սիրով խոնարին պահէ զքեզ
Որ զքեզ առնէ պարզերես:

Ցիշեայ զի մահացու ես
Մեռնիս և ի հող մտանես
Աստէնս դու ճար արայ քեզ
Որ անդ լինիս պարզերես:

Թէ քան զհարէլ արդար ես
Ընտիր եւ երկիւղած ես
Պատարագ մատուցող ես
Թէ սէր չունիս դատարկ ես:

Թէ քան զնոյ ընտիր ես
Եւ տապանակ շինեալ ես
Տուն Աստուծոյ կազմեալ ես
Թէ սէր չունիս դատարկ ես:

Թէ իբրեւ Աբրահամ ես
ԶԱստուած հիւր ընկալեալ ես
Լզէչքըն կերակեալ ես
Թէ սէր չունիս դատարկ ես:

Թէ քան զՄովսէս պահաւղ ես
Ընտիր սուրբ մարգարէ ես
Հետ Աստուծոյ խօսեալ ես
Թէ սէր չունիս դատարկ ես:

Թէ քան սուրբ Եղիա ես
Մարմնով երկննք ելեալ ես
Հնտիր եւ երկիւղած ես
Թէ սէր չունիս դատարկ ես:

Թէ իբրեւ ըգթունան ես
Ի փոր կիտին կացեալ ես
Ի նինուէ քարզեալ ես
Թէ սէր չունիս դատարկ ես:

A.R.A.R. @